ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-181[4]-13.11.2017-ՏՀ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «(սեփականատերերին կամ օգտագործողներին պատճառված վնասի հատուցման համար)» բառերը փոխարինել «անձանց պատճառված վնասի (այդ թվում՝ վարչարարության հետևանքով) հատուցման (բացառությամբ պետական բյուջե գանձված գումարները պետական բյուջեի մուտքերի համապատասխան հաշիվներից վերադարձնելու դեպքերի) և սույն հոդվածի 1.1-րդ մասով սահմանված միջոցների վերականգնման համար» բառերով:

Հոդված 2. Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 5-րդ կետով.

«5) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ ուղղություններ:»:

Հոդված 3. Օրենքի 72-րդ հոդվածը լրացնել նոր 1.1.-րդ և 1.2.-րդ մասերով.

«1.1. Պահուստային հիմնադրամի միջոցների անբավարարության դեպքում գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում իրականացնող վարչական մարմնի վարչարարության հետևանքով պատճառված

վնասի հատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների հաշվին: Այդ նպատակով տրամադրված միջոցները վերականգնվում են պահուստային հիմնադրամի միջոցների հաշվին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

1.2. Օրենքով սահմանված կարգով պաշտոնատար անձանց ներկայացված հետադարձ պահանջների բավարարումից ստացվող գումարներն ուղղվում են պահուստային հիմնադրամի համալրմանը»:

Հոդված 4. Օրենքի 72-րդ հոդվածի 6-րդ մասում «օգտագործման կարգը» բառերից հետո լրացնել «և առաջնահերթությունները» բառերը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում իրականացնող վարչական մարմնի վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին այն բոլոր ակտերը, որոնք ուժի մեջ են մտել 2014 թվականի հունիսի 1-ից հետո, ենթակա են կատարման պահուստային հիմնադրամի միջոցների հաշվին:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ-**181**[4]-13.11.2017-ՏՀ-011/0

Առաջին ընթերցում

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «(սեփականատերերին կամ օգտագործողներին պատճառված վնասի հատուցման համար)» բառերը փոխարինել «անձանց պատճառված վնասի (այդ թվում՝ վարչարարության հետևանքով) հատուցման (բացառությամբ պետական բյուջե գանձված գումարները պետական բյուջեի մուտքերի համապատասխան հաշիվներից վերադարձնելու դեպքերի) և սույն հոդվածի 1.1-րդ մասով սահմանված միջոցների վերականգնման համար» բառերով:

Հոդված 2. Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր 5-րդ կետով.

«5) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ ուղղություններ:»:

Հոդված 3. Օրենքի 72-րդ հոդվածը լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր 1.1.-րդ և 1.2.-րդ մասերով.

«1.1. Պահուստային հիմնադրամի միջոցների անբավարարության դեպքում գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում

իրականացնող վարչական մարմնի վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների հաշվին: Այդ նպատակով տրամադրված միջոցները վերականգնվում են պահուստային հիմնադրամի միջոցների հաշվին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

1.2. Օրենքով սահմանված կարգով պաշտոնատար անձանց ներկայացված հետադարձ պահանջների բավարարումից ստացվող գումարներն ուղղվում են պահուստային հիմնադրամի համալրմանը~~ (եթե վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցվել է պահուստային հիմնադրամի միջոցների հաշվին)»:~~»:

~~**Հոդված 4.**~~**Հոդված 4**. Օրենքի 72-րդ հոդվածի 6-րդ մասում «օգտագործման կարգը» բառերից հետո լրացնել «և առաջնահերթությունները» բառերը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում իրականացնող վարչական մարմնի վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին այն բոլոր ակտերը, որոնք ուժի մեջ են մտել 2014 թվականի հունիսի 1-ից հետո, ենթակա են կատարման պահուստային հիմնադրամի միջոցների հաշվին:

Հոդված ~~5.~~6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

Առաջին ընթերցմամբ ընդունված ««Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-181-13.11.2017-ՏՀ-011/0), ««Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-181[1] -13.11.2017-ՏՀ-011/0), ««Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-181[2] -13.11.2017-ՏՀ-011/0), ««Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-181[3]-13.11.2017-ՏՀ-011/0), ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-181[4]-13.11.2017-ՏՀ-011/0), ««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-181[5] -13.11.2017-ՏՀ-011/0), ««Մնդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-181[6] -13.11.2017-ՏՀ-011/0), ««Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-181[7]-13.11.2017-ՏՀ-011/0), ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-181[8] -13.11.2017-ՏՀ-011/0), ««Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-181[9] -13.11.2017-ՏՀ-011/0) եւ ««Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-181[10] -13.11.2017-ՏՀ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը

1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Խ.Հարությունյան	«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ:	«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի «Հայաստանի» բառից առաջ ավելացնել «Համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով» բառերը: Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 28-րդ հոդվածի 3.1-րդ մասի «պահուստային ֆոնդի» բառերից հետո հանել «կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների» բառերը, «ֆոնդից» բառից հետո հանել «կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցներից» բառերը և «ֆոնդի հաշվին» բառերից հետո ավելացնել «ՀՀ կառավարության սահմանված կարգով» բառերը: Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 28-րդ հոդվածի 3.2-րդ մասի ‹‹կարգը›› բառից հետո ավելացնել ‹‹և առաջնահերթությունները›› բառերը:	Ընդունվել է մասնակի: Նախագիծը վերախմբագրվել է: Նախագծի 3-րդ հոդվածում «ֆոնդի հաշվին» բառերից հետո ավելացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով» բառերը, իսկ 4-րդ հոդվածում «կարգը» բառից հետո «և առաջնահերթությունները » բառերը: Փաթեթում ընդգրկված նախագծերը «Հայաստանի Հանրապետության պահուստային ֆոնդի» բառերից հետո պարունակում են «կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ» բառերը՝ նպատակ	Ընդունվել է:

				ունենալով համապատասխան մարմինների ֆոնդերի անբավարարության դեպքում վնասի հատուցման հարցը լուծելիս չսահմանափակվել միայն ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցներով և հնարավորություն ընձեռել վնասի հատուցումը իրականացնել ՀՀ պետական բյուջեի այլ միջոցներից (կատարելով վերաբաշխումներ), ինչպես նաև կիրառել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասով նախատեսված՝ դատական ակտերի հիման վրա ՀՀպետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների	

				դիմաց մինչև մեկ տարի ժամկետով փոխանցվող մուրհակ տրամադրելու հնարավորությունը:	
2.		«Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներ:	«Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում ‹‹բառերով›› բառից հետո ավելացնել «, իսկ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների հաշվին›› բառերը փոխարինել ‹‹Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին» բառերով: Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկված նոր նախադասության մեջ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների հաշվին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի	Ընդունվել է մասնակի: Նախագիծը վերախմբագրվել է: Նախագծի 2-րդ հոդվածում «զարգացման ֆոնդի միջոցների հաշվին» բառերից հետո ավելացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով» բառերը, իսկ 3-րդ հոդվածում «ուղղությունները» բառից հետո ավելացվել է «և առաջնահերթությունները » բառերը: Առաջարկի մյուս մասով	Ընդունվել է:

			միջոցների հաշվին» բառերով, իսկ «զարգացման ֆոնդի միջոցների հաշվին» բառերից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով» բառերը: Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ կետի «ուղղությունները» բառից հետո ավելացնել «և առաջնահերթությունները» բառերը:	եզրակացությունը համընկնում է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին ներկայացված առաջարկների քննարկման արդյունքում կայացված եզրակացության հետ:	
3.		«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:	«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում ամրագրել դրույթ, համաձայն որի, որպես արտաբյուջետային միջոցների ձևավորման աղբյուր պետք է հանդիսանան նաև պաշտոնատար անձանց ներկայացվող հետադարձ պահանջի բավարարման միջոցները: Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի նոր խմբագրության 2-րդ պարբերության մեջ ‹‹ֆոնդի›› բառից հետո հանել ‹‹կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ›› բառերը, իսկ ‹‹հաշվին›› բառից	Ընդունվել է մասնակի: Նախագիծը վերախմբագրվել է: Նախագծի 1-ին հոդվածում ‹‹արտաբյուջետային միջոցների հաշվին›› բառից հետո ավելացվել է ‹‹Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով›› բառերը:Նախագիծը լրացվել է նոր նախադասությամբ: Առաջարկի մյուս մասով եզրակացությունը	Ընդունվել է:

			հետո ավելացնել ‹‹Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով» բառերը:	համընկնում է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին ներկայացված առաջարկների քննարկման արդյունքում կայացված եզրակացության հետ:	
4.		««Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:	««Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի նոր խմբագրության 1-ին պարբերության մեջ «միջոցները» բառից հետո ավելացնել «ինչպես նաև պետական լիազոր մարմնի պաշտոնատար անձանց վարչարարության հետևանքով պատճառած վնասը փոխհատուցելու նպատակով հետադարձ պահանջի բավարարումից ստացվող գումարները» բառերը, «կարգով» բառից հետո ավելացնել «և առաջնահերթություններով» բառերը,	Ընդունվել է մասնակի: Նախագիծը վերախմբագրվել է: Նախագծի 1-ին հոդվածում ‹‹ նշված միջոցների հաշվին ›› բառից հետո ավելացվել է ‹‹Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով և առաջնահերթություններով›› բառերը: Նախագիծը լրացվել է նոր նախադասությամբ: Առաջարկի մյուս մասով եզրակացությունը համընկնում է «Հարկային	Ընդունվել է:

			իսկ «ֆոնդի» բառից հետո հանել «կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ» բառերը: Նույն մասի 2-րդ պարբերությունում «ֆոնդի» բառից հետո հանել «կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ» բառերը, իսկ «նշված միջոցների հաշվին» բառերից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով» բառերը:	ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին ներկայացված առաջարկների քննարկման արդյունքում կայացված եզրակացության հետ:	
5.		‹‹Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին›› ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդված:	‹‹Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին›› ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 72-րդ հոդվածի 1.1 մասում ‹‹ֆոնդի›› բառից հետո հանել ‹‹կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ›› բառերը, իսկ ‹‹հաշվին» բառից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով» բառերը: Նախագծում ավելացնել նոր 3.1-րդ	Ընդունվել է մասնակի: Նախագիծը վերախմբագրվել է: Նախագծի 3-րդ հոդվածում ‹‹հիմնադրամի միջոցների հաշվին» բառից հետո ավելացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով» բառերը: Նախագիծը լրացվել է նոր հոդվածով: Առաջարկի մյուս մասով եզրակացությունը համընկնում է «Հարկային	Ընդունվել է:

			հոդված հետևյալ բովանդակությամբ. ‹‹Հոդված 31. Օրենքի 72-րդ հոդվածի 6-րդ մասում «օգտագործման կարգը» բառերից հետո լրացնել ‹‹և առաջնահերթությունները›› բառերը:	ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին ներկայացված առաջարկների քննարկման արդյունքում կայացված եզրակացության հետ:	
6.		‹‹Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին›› ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:	‹‹Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին›› ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ‹‹Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին›› Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության առաջին նախադասությունից հանել ‹‹կարող են›› բառերը, իսկ երրորդ նախադասությունից հանել ‹‹նախատեսման դեպքում›› բառեռը և ‹‹նշանակված են բացառապես›› բառերը փոխարինել ‹‹օգտագործվում	Ընդունվել է մասնակի: Նախագիծը վերախմբագրվել է: Նախագիծը լրացվել է նոր դրույթով՝ նախատեսելով ‹‹նշանակված են բացառապես›› բառերը փոխարինել ‹‹օգտագործվում են›› բառերով: Քննարկվող հոդվածում «կարող են» և «նախատեսման դեպքում» բառերը հանելու արդյունքում օրենքով կամրագրվի համապատասխան ֆոնդերի՝ պետական բյուջեի ծախսերում	Ընդունվել է:

			են›› բառերով: Նախագծում «պետական բյուջեի այլ միջոցների հաշվին, եթե այլ բան սահմանված չէ օրենքով» բառերը փոխարինել «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին» բառերով:	պարտադիր նախատեսման պայման, մինչդեռ, գործող խմբագրությունը թույլ է տալիս կոնկրետ մարմինների ֆոնդերի նախատեսման հարցը կարգավորել յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով: Առաջարկի մյուս մասով եզրակացությունը համընկնում է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին ներկայացված առաջարկների քննարկման արդյունքում կայացված եզրակացության հետ:	

7.		‹‹Մենդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին›› ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ:	‹‹Մենդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին›› ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի նոր խմբագրության մեջ ‹‹պահուստային ֆոնդի›› բառից հետո հանել ‹‹կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ›› բառերը, իսկ ‹‹ինչպես նաև›› բառերից հետո ավելացնել ‹‹համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով›› բառերը: Նույն մասի երկրորդ պարբերությունից հանել ‹‹կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ›› բառերը, իսկ ‹‹հաշվին›› բառերից հետո ավելացնել ‹‹Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով›› բառերը: Նույն մասի երրորդ պարբերությունում ‹‹կարգը›› բառերից հետո ավելացնել ‹‹և առաջնահերթությունները›› բառերը:	Ընդունվել է մասնակի: Նախագիծը վերախմբագրվել է: Նախագծի 1-ին հոդվածում ‹‹հաշվին›› բառերից հետո ավելացվել է ‹‹Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով›› բառերը, նույն մասի երրորդ պարբերությունում ‹‹կարգը›› բառերից հետո ավելացվել է ‹‹և առաջնահերթությունները›› բառերը: Նախագիծը լրացվել է նոր նախադասությամբ: Առաջարկի մյուս մասով եզրակացությունը համընկնում է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին ներկայացված առաջարկների քննարկման արդյունքում	Ընդունվել է:

			Օրենքի 15-րդ հոդվածում ավելացնել նոր դրույթ. ա) պետական լիազոր մարմնի պաշտոնատար անձանց վարչարարության հետևանքով պատճառած վնասը փոխհատուցելու նպատակով հետադարձ պահանջի բավարարումից ստացվող գումարները, որպես լիազոր մարմնի խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների աղբյուր դիտարկելու մասին: բ) ֆոնդի օգտագործման կարգը և առաջնահերթությունները սահմանում է ՀՀ կառավարությունը:	կայացված եզրակացության հետ:	
8.		‹‹Սոցիալական աջակցության մասին›› ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	‹‹Սոցիալական աջակցության մասին›› ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվող նոր 4-րդ կետի ‹‹…պատճառված վնասը›› բառերից հետո շարադրել նոր խմբագրությամբ. ‹‹…Հայաստանի Հանրապետության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին հատուցվելու դեպքում՝ Հայաստանի	Ընդունվել է մասնակի: Նախագիծը վերախմբագրվել է: Նախագծի 2-րդ հոդվածը վերախմբագրվել է, «հաշվին հատուցվելու դեպքում՝» բառերից հետո ավելացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»	Ընդունվել է:

			Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի միջոցների վերականգնման համար՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով››:Նույն մասի 5-րդ կետում ‹‹Հայաստանի›› բառից առաջ ավելացնել ‹‹համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով›› բառերը: Նախագծում ավելացնել նոր 21-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ. ‹‹Հոդված 21 . Օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. 5. ֆոնդի միջոցների մուտքագրման և օգտագործման կարգը, ինչպես նաև օգտագործման առաջնահերթությունները սահմանվում են ՀՀ կառավարության կողմից›› :	բառերը: Նախագիծը լրացվել է նոր հոդվածով: Առաջարկի մյուս մասով եզրակացությունը համընկնում է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին ներկայացված առաջարկների քննարկման արդյունքում կայացված եզրակացության հետ:	
9.		‹‹Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանու	‹‹Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին›› ՀՀ օրենքում	Ընդունվել է մասնակի: Նախագիծը վերախմբագրվել է: Նախագծի 1-ին հոդվածում «արտաբյուջետային միջոցների հաշվին» բառերից հետո ավելացվ է	Ընդունվել է:

		մների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին›› ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:	լրացում կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող օրենքի 11-րդ հոդվածի նոր 5.1- րդ մասում ‹‹վճարներից›› բառից հետո ավելացնել ‹‹ինչպես նաև օրենքով սահմանված կարգով պաշտոնատար անձանց ներկայացված հետադարձ պահանջների բավարարումից›› բառերը: Նույն մասի երկրորդ պարբերությունից հանել ‹‹կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ›› բառերը, իսկ ‹‹հաշվին›› բառից հետո ավելացնել ‹‹Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով›› բառերը: Նույն մասում ավելացնել նոր երրորդ պարբերություն հետևյալ բովանդակությամբ. ‹‹Արտաբյուջետային միջոցների օգտագործման կարգը և առաջնահերթությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը››:	«Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով» բառերը: Նախագիծը լրացվել է նոր նախադասություններով: Առաջարկի մյուս մասով եզրակացությունը համընկնում է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին ներկայացված առաջարկների քննարկման արդյունքում կայացված եզրակացության հետ:	

10.		‹‹Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին›› ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:	‹‹Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին›› ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծում առաջարկվում է ‹‹Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին›› օրենքի համապատասխան հոդվածում ամրագրել դրույթ, համաձայն որի, որպես արտաբյուջետային միջոցների ձևավորման աղբյուր պաշտոնատար անձանց ներկայացվող հետադարձ պահանջի բավարարման միջոցները››: Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող օրենքի 9.1 հոդվածի 2-րդ մասից հանել ‹‹կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ›› բառերը, իսկ ‹‹հաշվին›› բառից հետո ավելացնել ‹‹Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով›› բառերը: Առաջարկվում է նաև օրենքի համապատասխան հոդվածում ամրագրել դրույթ, ըստ որի՝	Ընդունվել է մասնակի: Նախագիծը վերախմբագրվել է: Նախագծի 1-ին հոդվածում «արտաբյուջետային միջոցների հաշվին» բառերից հետո ավելացվ է «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով» բառերը: Նախագիծը լրացվել է նոր նախադասություններով: Առաջարկի մյուս մասով եզրակացությունը համընկնում է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին ներկայացված առաջարկների քննարկման արդյունքում կայացված եզրակացության հետ:	Ընդունվել է:

			արտաբյուջետային միջոցների օգտագործման կարգը և առաջնահերթությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:		
11.		‹‹Քաղաքացիական կացության ակտերի մասին›› ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:	‹‹Քաղաքացիական կացության ակտերի մասին›› ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող օրենքի 84-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունում ‹‹վճարներից›› բառից հետո ավելացնել ‹‹ինչպես նաև օրենքով սահմանված կարգով պաշտոնատար անձանց ներկայացված հետադարձ պահանջների բավարարումից›› բառերը: Նույն մասի երկրորդ պարբերությունից հանել ‹‹կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ›› բառերը, իսկ ‹‹հաշվին›› բառից հետո ավելացնել ‹‹Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է մասնակի: Նախագիծը վերախմբագրվել է: Նախագծի 1-ին հոդվածում «արտաբյուջետային միջոցների հաշվին» բառերից հետո ավելացվ է «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով» բառերը: Նախագիծը լրացվել է նոր նախադասություններով: Առաջարկի մյուս մասով եզրակացությունը համընկնում է «Հարկային ծառայության մասին» ՀՀ	Ընդունվել է:

			կառավարության սահմանած կարգով›› բառերը: Նույն մասում ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ. ‹‹Արտաբյուջետային միջոցների օգտագործման կարգը և առաջնահերթությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը››	օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին ներկայացված առաջարկների քննարկման արդյունքում կայացված եզրակացության հետ:	
12.			Փաթեթում ընդգրկված նախագծերից հանել «(եթե պաշտոնատար անձանց վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցվել է ֆոնդի միջոցների հաշվին)» բառերը:	Ընդունվել է: Նախագծերը խմբագրվել են: Փաթեթում ընդգրկված նախագծերից հանվել են «(եթե պաշտոնատար անձանց վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցվել է ֆոնդի միջոցների հաշվին)» բառերը:	Ընդունվել է:
13.			Փաթեթում ընդգրկված նախագծերից հանել «հետեւյալ բովանդակությամբ» և «հետեւյալ խմբագրությամբ» բառերը՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնները:	Ընդունվել է: Նախագծերը խմբագրվել են:	Ընդունվել է:

14.			««Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5-րդ հոդվածն առաջարկում ենք դարձնել 4-րդ հոդված:	Ընդունվել է: Նախագծերը խմբագրվել են:	Ընդունվել է: